

ԳՐԱԽՈՍՔՆԻՆ—ՔՆՆԻ ԴՐԱՄՆԻ

Նիկ. Սարգսեան, Գասավիրք բնական պատմութեան
Հայոց միղասեան դարոցների համար. դիմու. 50 կու.

Բնական պատմութեան մեթոդիկան աստիճանաբար է զարգացել. անցեալներում բնական պատմութիւն ասելով հասկացւում էր կենդանիների, բոյսերի, հանքերի զուտ նկարագիրը. արտաքինը կազմում էր հետաքրքրութեան կենդրութիւնը: Աշակերտը սկսում էր նկարագրել կենդանուն գլխից սկսած մինչև պոչը և կամ այլ կերպ: Աչքերը, ականջները, ատամների տեսակները և քանակը, բոյսերի ձեր, տերենների կերպը ապրելու մի քանի պայմանները կազմում էին բնական պատմութեան բուն նիւթը: Աշակերտի հոգին մնում էր անտարեր դէպի նիւթը, հազար անգամ տեսածը, տնտղածը նորից էր կրկնուում. չկար նոր, հետաքրքիր և մտքին առատ նիւթ մտակարող տեսակէտ:

Բնական գիտութիւնների զարգացման հետ նոր ուղիների մէջ մտաւ նուև դպրոցական բնագիտութիւնը: Բնական գիտութիւնները 19-րդ դարու ընթացքում դարձան պատճառական և բացատրական ինդիբներին հետեւող գիտութիւնները: Պէտք է բացատրել և ոչ միայն նկարագրել զրադանինիւթը: Կենդանիների մարմինները նիրկայացնում են բաղմակերպութիւն, կենդանու մարմնի մասները զանազան ձևափոխութիւնների են ենթարկուած և այնպէս, որ յարմարօրէն կատարեն իրենց վրայ դրուած պարտականութիւնները: Կենդանին ցատկող, վազող, մեծ կամ փոքր մարմնով է, որովհետեւ նրա օրգանների կազմը, կեանքի եղանակը այդ է թելագրում: Պէտք է կեանքի եղանակը բացատրել, պարզել օրգանների կազմից, ինչպէս և այս վերջիններիս յարմար լինելը կեանքի եղանակին և շրջապատող հանգամանքներին: Դպրոցում, նոյն իսկ ծխական դպրոցում պէտք է այս եղանակով անցնել մարդակազմութիւնը բուսաբանութիւնը և կենդանաբանութիւնը: Այս ուղղութեան յաջողակ փորձեր են եղել երոպական երկրներում. հին մեթոդը արդէն դուրս է զալիս մրցութիւնից: Մեր մօտ ևս այս նոր—կենսաբանական-մեթոդը հող է բռնել մի քանի դասագրքեր կազմուած են այդ մեթոդով: Աւսուցիչները պէտք է ակամայից

ենթարկուեն այդ մեթողին, եթէ վերոյիշեալ գրքերը իրրե դաշսագիրք են ընտրել: Որքան մեզ յայտնի է, մեր դպրոցներում ամենից տարածուած են այն դասագրքերը, որոնք բաւարարում են կենսաբանական ոկզրունքին:

Այս նոր մեթողը աշակերտներին մեծ հետաքրքրութիւն է պատճառում. շատ ճիշտ է նկատում ալ. Սարգսեանը, «որ այդ ուղղութեամբ տարուած դասաւորութիւնը ոչ միայն գրաւում է աշակերտութեան սէրն ու ուշադրութիւնը գէպի առարկան, այլ և դարգացնում է աշակերտի մէջ առողջ և տրամաբանական մտածողութիւն ու բնական երեսոյթների պատճառներն ըմբռնելու ձգտումն»:

Պ. Սարգսեանը մեծ յաջողութեամբ կարողացել է կենսաբանական տեսակէտը անցկացնել օրգանների նկարագիրների ժամանակ: Ամեն տեղ էլ կդանէք նոյն ոկզրունքի կիրառումը. մատչելի, երեխաններին զիւրըմբոննելի եղանակով են մշակուած նիւթերը. այդ տեսակէտից նա նոր պահանջներին բաւարարող մի դիրք է:

Պ. Սարգսեանը կենդանների արտաքին նկարագրի վրայ առանձին ուշադրութիւն չի դարձնում և այդ բանը նա, ինչպէս յառաջաբանի մէջ պարզում է, արել է զիտաւորեալ կերպով. «իւրաքանչիւր կենդանու կամ բոյսի մասին խօսելիս, մենք աշխատել ենք ոչ թէ նկարագրի նրան, այլ բացատրել»: Պարզ է, որ հեղինակը զիտաւորեալ կերպով նկարագիրների վրայ ուշադրութիւն չէ դարձրել. սա միակողմանի տեսակէտ է որքան սխալ է զուտ նկարագրական տեսակէտով առաջնորդուելը, նոյնքան սխալ է միմիայն և միմիայն կենսաբանականը ի նկատի առնելը և մոռանալը կենդանների և բոյսերի արտաքին նկարագիրները: Կենսաբանական մեթոդի ամենայայտնի ներկայացուցիչը, պրօֆ. Շմայլը նոյն իսկ խնդիրը այդքան միակողմանի չէ ըմբռնում. նա կտրուկ կերպով պաշտպանում է այն միտքը, ուր կենսաբանական մեթոդը չի վերացնում նկարագրականի արժէքը: Կենդանու, բոյսի արտաքինի նկարագիրն էլ ունի իր առանձին կարևորութիւնը. պարզ, լիակատար, մշակուած պատկերացումներ պէտք է տալ երեխաններին. օրգանի փունկցիան որոշելուց առաջ պէտք է նախ առարկայօրէն ճանաչել նրա արտաքինը: Ճիշտ որ կարելի է համաձայն լինել այն կարծիքի հետ, թէ արտաքին նկարագիրը կարելի է չդնել դասագրքի մէջ ծաւալը չմիծացնելու համար, սակայն դրա փոխարէն գրքի յառաջաբանում պէտք է պաշտպանուէր պ. Սարգսեանի կարծիքին հակառակ տեսակէտ և ուսուցին յանձնաբարուէր անկախօրէն տեղեկութիւններ տալ

կենդանիների և բոյսերի աբտաքինի մասին։ Կոնկըետ պատկերացումները և դիտելու մէջ վարժուելը այնքան կարևոր հանգամանք է, որքան երևոյթների պատճառական կապը դտնելը։

Սարգսեանը երկդասեան դպրոցների համար արդէն վաղուց բուսաբանութեան և կենդանաբանութեան գրքեր է հրատարակել, որոնք սակայն անյարմար էին միդասեան դպրոցների համար։ Այժմ այս նոր դասագրքի միջոցաւ, որի մէջ ամփոփուած են մարդակազմութեան, կենդանաբանութեան, բուսաբանութեան և մարմինների մասին հիմնական գիտելիքները, լրանում է մի մեծ պակաս։ Դասագիրքը գործ ածող ուսուցիչներին հնարաւորութեան է տրում միդասեան դպրոցներում գործ ածելու մի շատ յաջող կազմած դասագիրք։

Մեր կարծիքով բնական գիտութիւնները պէտք է անցնել առանց դասագրքի։ կենդանին, նկարը, մոդելը պէտք է լինեն այն պայմանները, որոնց մասին աշակերտը ուսուցչի ղեկավարութեամբ պէտք է խօսէ և մտածէ։ Սակայն այն ուսուցիչները, որոնք անպայման կողմնակից են դասագիրք գործածելու և կամ ցանկանում են աշակերտներին բնագիտական ընթերցանութեան գիրք տալ, կարող են ամենայն վստահութեամբ գործածել Սարգսեանի այս նոր լոյս տեսած դասագիրքը։

Գ. Էջիլիան